ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի բացման նիստի/

ք. Երևան «07» նոյեմբերի 2017թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին.**

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ոչ գնային պայմանները բավարարող գնահատված, նիստին ներկա մասնակիցների առաջարկած գներն են.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ			«Նորմա-պլյուս» ՍՊԸ		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Ֆլեշ հիշողություն, 32GB				105 800	21 160	126 960*
2	Ցանցային բաժանարար /տվիչ 8 պորտ/				132 300	26 460	158 760*
5	Պլաստիկ քարտ	83 300	16 660	99 960			
6	Մալուխ՝ համակարգչի, UTP cable 6 level						

*«Նորմա-պլյուս» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված հայտով առաջարկած գները թողել է անփոփոխ:

2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

-3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Վարմէքս» ՍՊԸ-ին,

-4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին:

-5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին:

-3-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին,

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- ընթացակարգը 1-ին, 2-րդ, 6-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

-հաստատել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06» ծածկագրով ընթացակարգը 1-ին, 2-րդ, 6-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) հայտերի բացման նիստի արձանագրությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում,

2) հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

4) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. նոյեմբերի 13-ը ներառյալ, հրավերով սահմանված կարգով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

-Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2017թ. նոյեմբերի 15-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նիստը

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06»**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
1.	Ֆլեշ հիշողություն, 32GB	«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ «Կոմպմարկետ» ՍՊԸ «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ «Նորմա-պլյուս» ՍՊԸ	<u>1-ին կետի</u> 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գները
2.	Ցանցային բաժանարար /սվիչ 8 պորտ/	«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ «Կոմպմարկետ» ՍՊԸ «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ «Նորմա-պլյուս» ՍՊԸ	<u>1-ին կետի</u> 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գները
6.	Մալուխ՝ համակարգչի, UTP cable 6 level	«Էկոմիքս» ՍՊԸ	<u>1-ին կետի</u> 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06» ծածկագրով գնումների համակարգող Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ **010-511-787**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ»** ՊԿՀ: